Ընդամենը երկու օր շարունակվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց շարժման անդամների ուխտագնացությունը Թբիլիսի:

Երեւանի եւ Արարատյան մարզի տարբեր եկեղեցիներն ընդգրկող այս շարժման 50 անդամներ, բոստոնահայ Տեր Տաճատ ավագ քահանա Դավիդյանի գլխավորությամբ, Թբիլիսիի տեսարժան վայրերը տեսնելու եւ վիրահայ հավատացյալի հետ ավելի մոտ ծանոթանալու ու մերձենալու նպատակով, մայիսի 12-ին ուխտագնացությամբ ժամանեց Թբիլիսի:

Երիտասարդաց շարժման անդամները եղան Մցխեթայում, դիտեցին Ձվարին, Սվետիցխովելին, այցելեցին Ֆունիկուլյորի